

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՁ

Հայերենի զարգացման տարբեր շրջանների քերականները լեզվի ձևաբանաշարահյուսական կարգերն ուսումնասիրելիս ըստ անհրաժեշտության խոսել են այն բաների մասին, որոնք իրենց իմաստային կառուցվածքով ի հայտ են բերում քերականական տարարժեքություն և օժտված են բազմագործառույթ դերով: Դեռևս Դիոնիսոս Թրակացիցն և նրա մեկնիչները նկատել են, որ որոշ բառեր հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումով: Լատինատիպ քերականությունների շրջանի աշխատություններում այս խնդիրը հիմնականում լուսաբանվել է նյութական բովանդակությունից գուրկ խոսքի մասերի շրջանակներում: Աշխարհաբարի քերականական աշխատություններում լեզվաքերականական հարցադրումները յուրովի մեկնաբանություն են ստանում, որ պայմանավորված է մի կողմից՝ լեզվաբանական գիտություն զարգացման նոր շրջանով, մյուս կողմից՝ անցյալի գիտական նվաճումները քննադատաբար յուրացնելու հանգամանքով:

Դարասկզբի և խորհրդային շրջանի քերականագիտական աշխատություններում իմաստաբանական և բառաքննական հետազոտությունները նոր ծավալ են ստանում: Այս շրջանում ձևաբանական մակարդակի կառուցվածքային միավորները հաճախ բնութագրվում են իրարամերժ սահմանումներով: Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Գ. Սևակը, Ա. Աբրահամյանը, Գ. Գարեգինյանը և այլոք ներկայացնում են այս իրողությունը յուրաքանչյուրն իրեն հետաքրքրող տեսանկյունից՝ բառույթի իմաստային-ձևաբանական երկատվածության վերաբերյալ տարբեր նկատառումներ ունենալով: Հր. Աճառյանը մեկից ավելի ձևաբանական արժեքներ համատեղող բառերի մասին խոսելիս կարևորել է դրանց ժամանակագրության որոշումը՝ հաշվի առնելով, որ ձևաբանորեն տարբեր բառերի առաջացումը կրում է տարածամանկյա բնույթ: Գ. Սևակը այդ իրողությունը կապում է խոսքիմասային փոխանցումների հետ,¹ Մ. Աբրահամյանը՝ բառիմաստի ներառման գործոնի հետ:² Մ. Ասատրյանը նման բառերի ամկայությունը բացատրում է խոսքիմասային փոխանցումների գործընթացով:³ Ակադեմիկոս Ջահուկյանը առաջին անգամ կատարում է դրանց դասակարգումը՝ տարբերակելով եռակի և երկակի գործածություն ունեցող բառեր՝ դրանք համարելով գործառական համանուններ, իսկ քերականական երևույթը՝ գործառական համանունություն:⁴ Ն. Պառնասյանը բառերի և բառածևերի քերականական երկարժեքությունը և եռարժեքությունը քննում է թե՛ ձևաբանական (երբ տարարժեքությունը գիտակցվում է նաև խոսքից դուրս), թե՛ շարահյուսական առումներով (երբ տարարժեքությունը դրսևորվում է խոսքային համապատասխան միջավայրում):⁵ Հ. Բարսեղյանը խոսքիմասային փոխանցման երևույթը համարում է բառերի՝ այլ խոսքի մասերի գործածությամբ հանդես գալու երկարատև գործընթացի հետևանք:⁶ Խոսքիմասային փոխանցումների և դրանց հետևանքով առաջացած տարարժեք բառերի քննությանն առանձին մենագրություն է նվիրել Լ. Խաչատրյանը՝ բառերի ձևաբանական իմաստի և արժեքի տեղաշարժում ուսումնասիրելով միջխոսքային և ներխոսքային միջավայրով: Իրողությունը հեղինակը դիտել է իբրև պատմական-իմաստափոխական գործընթաց և այն քննել է հայերենի զարգացման գրաբար, միջին հայերեն, արդի հայերեն կտրվածքներով:⁷

¹ Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Եր., 1955, էջ 251:
² Մ. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Եր., էջ 34:
³ Մ. Ասատրյան, *Հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Եր., 1970, էջ 92-97:
⁴ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Եր., 1974, էջ 525-528:
⁵ Ն. Պառնասյան, *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Եր., 1971, էջ 87-102, 172-178:
⁶ Հ. Բարսեղյան, *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Եր., 1980, էջ 474:
⁷ Լ. Խաչատրյան, *Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ*, Եր., 1999, էջ 25:

Այսպիսով, հայերենի պատմական զարգացման ընթացքում կատարվել է մի կարևոր իմաստափոխություն և՛ (բառիմաստի փոփոխության այլ տեսակներից բացի)՝ բառերի խոսքիմասային իմաստափոխությունը: Այս իրողության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում տեղի է ունեցել անցում խոսքիմասային բազմիմաստությունից մեկիմաստության (մասնակի բացառություններով): Այս երևույթի զարգացումն ըստ էության հայերենի ձևաբանական համակարգված դառնալը հանգեցրեց խոսքիմասային բազմիմաստություն կոչվող իրողության կենսունակության աստիճանական նվազմանը: Գրաբարի համեմատությամբ միջին և արդի հայերեններում ամհամեմատ քիչ են մեկից ավելի խոսքիմասային իմաստ ունեցող բառերը: Խոսքիմասային այս կամ այն միջավայրում այդ երևույթը կարող է դրսևորվել, բայց արդեն չունի այն ընդհանրական բնույթը, որ ուներ հին հայերենում: Ակներև է, որ մեկից ավելի խոսքիմասային նշանակություն ունեցող բառերի քերականական իմաստները պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են հստակեցման (ժամանակի ընթացքում նախապատվությունը տրվել է այս կամ այն քերականական, խոսքիմասային նշանակությանը):

Չնայած լեզվական այս իրողությունը առնչվել է տարբեր խոսքի մասերի, բայց պետք է նշել, որ խոսքիմասային իմաստների անցումները հիմնականում վերաբերում են առարկա և առարկայի հատկանիշ ցույց տվող բառերին, այսինքն՝ գոյականին և ածականին: Ընդ որում, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե լեզվի պատմական զարգացման շրջաններից մեկում բառը խոսքիմասային այլ նշանակությունից բացի ունեցել է նաև ածականական կիրառություն, ապա արդի հայերենի բառապաշար է մուտք գործել միայն որպես ածական, այսինքն՝ ի տարբերություն նույն բառի ունեցած խոսքիմասային այլ նշանակությունների՝ հիմնականում պահպանվել է առարկայի հատկանիշ ցույց տալու նշանակությունը: Օրինակ՝ «ամուր» բառը գրաբարում գործածվել է թե՛ որպես գոյական (նշանակել է բերդ, ամրոց, ապահով և բայծր տեղ), թե՛ որպես ածական. «...տապալեալ ավերեցան *ամուրք* ապաստանի նոցա»/Եղ., 404/: Բուզանդի մոտ՝ «Ապա երթեալ գտանէր զնոսա *յամուրս* աշխարհին Տայոց...»/ Բուզ., 107/: Որպես ածական՝ «Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին, նոքա ի վահանափակն Յունաց իբրև *յամուր* քաղաք մտանէին»/Խոր., III ԼԷ: Արդի հայերենում «ամուր» բառն ունի միայն ածականական իմաստ:

Նույնը պետք է ասել «ծածուկ» բառի մասին, որը գրաբարում գործածվել է թե՛ որպես գոյական, թե՛ որպես ածական: *Ծածուկ* (ած) - *բաբուն*-«Յառաջ խաղային իրենանց զգէնան *ծածուկ* վառեալ»/Եղ., 308/: *Ծածուկ* (գոյ)- *գաղտնիք*-«*Ծածուկք* անիծեալք, դիպուած թշնամեալք...»/ՀՀՄՔ, 138/:

«Բազում» բառը գրաբարում նշանակել է ինչպես «շատ»-(ած)- «Այլ որպես ցուցաբ *բազում* անգամ զամբարիչուն, չարութիւն, յորդորէր և ստիպէր զօրսն...»/Եղ., 252/, այնպես էլ՝ «շատ բան» - «*Քանզի բազումք* յազգէ ի մեծ նախարարաց էին, եւ եղբարք եւ որդիք և դստերք»/ն.տ. /:

Օրինակներից նկատվում է, որ այլ խոսքի մասերի պատկանող շատ բառեր պատմական իմաստափոխության ենթարկվելիս արդի հայերենի բառապաշար մուտք են գործել միայն որպես ածականներ: Սա, իհարկե, պայմանավորված է այն հանգամանքով, որ բառը լեզվի զարգացման պատմական շրջաններից մեկում օժտված է եղել նաև հատկանիշ արտահայտելու հնարավորությամբ:

Երբ երևույթն իր պատմական զարգացման մեջ տեսնելու համար համեմատում ենք գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի՝ բացատրական բառարաններում եղած բառերի խոսքիմասային պատկանելության նշումները, տեսնում ենք, որ գրաբարում, ինչպես նաև միջին հայերենում մակբայի, գոյականի ձևաբանական արժեք ունեցող շատ բառեր արդի հայերենում դարձել են ածականներ: Անցումը խոսքիմասային մի իմաստից մյուսը, իհարկե, պայմանավորված է բառագործածության խոսքային մի-

⁸ Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, ի սուրբ Ղազար, 1865; Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 1987; Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1974:

զավայրով, ոչտեղ էլ կատարվում են նման փոփոխություններն ու անցնում գրավոր լեզու:

Վերոհիշյալ իրողությունը նպատակահարմար է ցույց տալ ստորև բերվող աղյուսակի միջոցով, ուր ներկայացված են լեզվի պատմական զարգացման երեք փուլերում տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող մի խումբ բառեր:

Գրաբար	միջին հայերեն	արդի հայերեն
բարկ	բառև-բարկ	բարկ
աժ.- 1. խիստ, ազոու, կծու, բունդ 2. ցասկոտ, մկ.- 3. սաստկապես (ՆՀԲ էջ 178) կրքոտ	մկ.- սաստկապես, ուժգին, բարձր	աժ.- 1 թեժ, կիզիչ 2 կրակոտ 3 խիստ, ազոու, կծու, բունդ 4 սաստիկ 5 (միսք) գայրագին
կանգուն	կանգնուկ	կանգուն
աժ., մկ. - կանգնած, շիտակ, ուղիղ, անբերի (ՆՀԲ էջ 420)	մկ. - կանգնած, կանգուն-կանգուն աժ.- կանգնած, կանկուն մկ. - ոտքի վրա կանգնած	աժ.- 1 ոտքի վրա կանգնած 2 այնպիսին, որ գտնվում է ոտիդ դիրքում 3 չավերված 4 հաստատուն 5 (փխր) յխտված, յրկնված
զգույ	զգույշ	զգույշ
աժ.- 1. զգուշորեն 2. ապստոլ (ՆՀԲ էջ 291)	մկ.- զգույշ, ուշադիր	աժ.- 1 ուշադիր, կենտրոնացած 2 շքափայլ 3 զգուշությամբ կատարված 4 հոգատար, նուրբ, քնքուշ 5 զգուշամասն բազականություն
անայառ	անայար	անայառ
զոյ.- 1 խտրություն չանող 2 անպատկառ չակնածող մկ.- 3 անայառ կերպով (ՆՀԲ էջ 41)	մկ.- անխտիր, անխնա	աժ.- 1 ոչ այառու, անկողմնակալ 2 անաչառությամբ կատարված 3 (հնց) չակնածող
դիւր	դուր	դյուր
աժ.- 1. հեշտ, 2 հարթ, 3 հաճելի զոյ.- 4. հեշտություն, անդորրություն 5 հարթավայր մկ.- 6. հեշտությամբ	աժ.- 1. հեշտ, թեթև, ոլորտին զոյ.- 2. հարթավայր, դուրդուր մկ.- 1. լավ, հաճելի աժ., մկ.- 2. հեշտ, դյուրին աժ.- 3 հարթ, տափարակ զոյ.- 4 հանգիստ	աժ.- 1 շատ ջանք չպահանջող 2. հեշտությամբ կատարվող
անհնարին	անհնարական	անհնարին
աժ.- 1 անկարելի, անհնար մկ.- 2. խիստ, սաստիկ 3. անստիկ 4 չափազանց, խիստ շատ	աժ.- անհնար, անկարելի	աժ.- 1 ոչ հնարավոր, անկարելի 2 անդիմադրելի 3 (փխր) սաստիկ, ծայրահեղ

Համեմատարար քիչ թվով բառեր խոսքիմասային իմաստափոխության ենթարկվելի վերին ձևեր են բերել զոյականի արժեք, կամ լեզվի զարգացման նախորդ շրջաններում ունեցած տարբեր նշանակություններից պահպանել են միայն զոյականակաճը: Բե- լիքներն մի քանի օրինակ՝ բառի խոսքիմասային իմաստափոխության՝ դեպի զոյական և ուղղվածությունը ցույց տալու համար:

գրաբար	միջին հայերեն	արդի հայերեն
զէշ	զէշ	զէշ
զոյ.- 1. մեռած մարդ, դիակ 2 կոտորած բանի, կտոր աժ.- (ոմկ) հոռի, անխտրժ (ՆՀԲ էջ 215)	աժ.- վատ, անպիտան մկ.- վատ, վատ կերպով	զոյ.- կենդանու դի (արևմտ՝ աժ.- վատ)
անդէն	անդին	անդեն
մկ.- 1. այնտեղ, նույն տեղը 2 շուտով, իսկույն, անմիջապես նույն ժամանակ 3 առաջուց (ՆՀԲ էջ 50)	զոյ.- հանդերձյալ աշխարհը	զոյ.- 1 (զվո) այնտեղ, այն կողմը 2. այն աշխարհը, հանդերձյալ կյանքը
զագան	զագան	զագան
զոյ.- 1 գիշատիչ 2 մեծ օձ, զագանաբարո մարդ աժ.- զագ. դարձած (ՆՀԲ էջ 119)	աժ.- 1 ուժեղ, բարկ, բունդ 2 (փխր) հրացայտ	զոյ.- 1 վայրի գիշատիչ 2. (փխր) արյունաշուշտ մարդ

Ինչպես ցույց են տալիս շված դեպքերը, խոսքիմասային բազմիմաստություն ունեցող շատ բառեր արդի հայերենում դարձել են մեհիմաստ՝ հստակորեն ընկալվելով այս կամ այն ձևաբանական արժեքով: Բայց պետք է նշել, որ կան բառեր էլ (օր՝ «բնիկ», երեց, «ասպնջական», ըմպելի» և այլն), որոնք իրենց ձևաբանական նշանակության կողքին (եհիմնականում՝ ածականական) պահպանել կամ լքվով զարգացման ընթացքում ձեռք են բերել երկրորդ՝ գոյականական նշանակություն՝ (հազվադեպ՝ մակբայական (րոճայի, դույզն)) մատնացույց անելով թե՛ հատկանիշը, թե՛ հատկանիշը կրողին:

Բառերի խոսքիմասային բազմիմաստության մասին խոսելիս պետք է կարևորել համանունների հարցը: Վերոհիշյալ բոլոր օրինակներում բառերը ունենին խոսքիմասային տարբեր իմաստներ նույն բառաձևի համար, մինչդեռ որոշ թվով բառեր ձևաբանական նոր արժեք են ստանում ռուպես համանուններ գործածվելիս:

գրաբար	միջին հայերեն	արդի հայերեն
բարակ-ած. փափուկ, մանր բարակ-գոյ. շուն բարակ-մկ. ուշադրությամբ	բարակ-մկ. 1. մանրամասն 2. մանր 3. թույլ կերպով 4. աստիճանաբար	բարակ-ած. 1. նվազ հաստություն 2. փոքր տրամագիծ ունեցող 3. փոքր ծավալ ունեցող 4. մանր, մանրահատիկ, նուրբ 5. բարեձև, ճկուն 6. զգալուն, դյուրազգաց 7. (փխր) մեղմ, ոչ խիստ 8. (փխր) ուշադիր, մանրագրին բարակ-գոյ. շան տեսակ
բալ-գոյ. 1 կեռաս, 2. բալ-գոյ. մեզ, մշուշ ած.- մթազույն	բալ-գոյ. 1. կեռասնու պտուղը 2. բալենու պտուղը	բալ - գոյ. 1. մեզ, մառախուղ 2. հիվանդության ժամ. լեզվի վրա առաջացող փառ, բալ-գոյ. 1. բալենու պտուղը 2. (սխ) կեռասնու պտուղը բալ-գոյ. (պարսիսանդես)
բափուր-ած. 1. դատարկ 2. ամայի 3. ազատ, անմասն բափուր-գոյ. փայտե մատուցարան	բափուր-ած. մկ. բափուր դատարկ գուրկ	բափուր-գոյ. փայտե սկուտեղ բափուր ած. 1. դատարկ 2. ազատ 3. անմարդարևակ 4. գուրկ, անմասն 5. տերևները թափված 6. (փխր) ոգևորությունից գուրկ
խոռ-գոյ. 1. անցք, փոս, ծերպ 2. փոս տեղ, ձորակ ած- 3. պակասավոր դարձած, թերի, 4. խոռչ դարձած, խոռ-գոյ. խոտի տեսակ խոռ-ած. ժլատ, խոռ-խրամատի կողմը	խոռ-գոյ. 1. ծակ, փոս 2. խրամ 3. ած. - տձև 4. մկ. - տխուր 5. դատարկ, ազատ, բափուր, պարապ	խոռ-գոյ. 1. պատի քանդած մասը 2. այգիների պատի մեջ բաց թողած տեղը 3. փոս, խրամ 4. փոս ընկած վայր 5. (փխր) սիրտը կտրած 6. խեթ 7. կիսատ խոռ-գոյ. ուրց

Լեզվի անընդհատ զարգացման և փոփոխության մեջ բառիմաստի հետ փոփոխության են ենթարկվել բայիմաստները՝ զուգահեռաբար ձեռք բերելով նոր իմաստներ:

Քերականական իմաստափոխության տեսակ է նաև բայի սեռի իմաստի փոփոխությունը: Բայի սեռային պատկանելության մեջ կատարված տեղաշարժները ներկայացնող դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարը շատ հարուստ է կրկնասեռ և սեռային զուգահեռություն ունեցող բայերով: Միջին հայերենում արդեն զգալիորեն պակասում են կրկնասեռ բայերը, իսկ ժամանակակից հայերենում դրանց թիվը չափազանց փոքր է: Հենց այս գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռային փոխանցումները հիմնականում կատարվել են երկու ուղղությամբ՝ 1. կրկնասեռությունից չեզոք սեռ. 2. կրկնասեռությունից ներգործական սեռ:

Իհարկե, գերակշռում են կրկնասեռություն չեզոք սեռ ուղղությամբ կատարված սեռային անցումների դեպքերը (26 բայից 11-ը՝ կրկն., 15-ը՝ կրկն>չ) (անկանոն II ան-

կանին II, ժամանեմ II ժամանին, հոսեմ II հոսին, ճամարտակեմ II ճամարտակին, ճոգոպրեմ II ճոգոպրին, հապաղեմ II հապաղին, հառել II հառիմ և այլն): Սեռային տեղաշարժերի ժամանակ գրաբարից արդի հայերեն ընկած երկարատև ուղին անցնելիս բայերը կամ կորցրել են գրաբարում առանձին սեռային պատկանելությամբ արտահայտվող նշանակությունը (ինչպես՝ «ամբաստանել» բայի «արհամարհել» նշ-ը, «անկանել» բայի «հյուսել, գործել», «ժամանել» բայի «ստանալ» նշանակությունը և այլն), կամ նշված նշանակությունն արտահայտել են նոր բառաձևով (կանգնեմ (նք)՝ կանգնեցնել, հաջողեմ (նք)՝ հաջողեցնել)՝ հիմնականում բայածանցների կամ բայական հարադրությունների միջոցով: Մեծ կարևորություն ունեն ցանկ կրավորական իմաստի արտահայտման համար վաճանցի գործածության դեպքերը քննելիս, այնպես էլ այս պարագայում դարձմասային իմաստավորության դեպքերը քննելիս, այնպես էլ այս պարագայում դարձյալ պետք է կարևորել լեզվի պատմական զարգացման երկրորդ՝ միջին հայերենյան շրջանը, քանի որ շատ բայեր հենց միջին հայերենում են կորցրել կրկնասեռությունը և արդեն որպես միասեռ բայ՝ անցել են լեզվի զարգացման հաջորդ փուլ: Օրինակ՝ սատակել⁹ բայը ներգործածակիրառության դեպքում գրաբարում նշանակել է 1. «ավերել», «զնջել», «կորցնել», 2. «սպանել», «կոտորել», կրավորածակիրառության դեպքում՝ «սատակել», «մեռնել»:

Օր.՝ «Հրաման ետ թագաւորն սատակել զամենայն ապստամբ» /Բուգ., 133/: Սատակել զամենայն ծնունդս Արգամայ...» /Խոր., 144/: «Յորժամ պատահելին միմեանց՝ դարձեալ միսանգամ զմիմեանս սատակելին» /Եղ., 238/: Արդի հայերենում «սատակել» բայը չեզոք սեռի բայ է և վերաբերում է կենդանիներին, իսկ գրաբարում օգտագործվող «մահանալ» նշանակությունը արդեն ստացել է անարգական, արհամարհական երանգ և գործածվում է միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերվում է անարժան մարդուն: Պարզվում է սակայն, որ այս նշանակությունը բառն ունի միջին հայերենում: Բառարանում կարդում ենք՝ սատակիչ - չ. - մեռնելը (կենդանիների մասին) Զի սատակեցաւ ինքն, այն ձին:

«Հւսճել» կրկնասեռ բայը գրաբարում նշանակել է՝ նք. - 1. համաձայնեցնել, հաշտեցնել 2. սիրտն առնել, հաճոյացնել 3. վճարել, չք. - հավանել, ախորժել, սիրել, հաշտվել: ¹⁰ «Իբրև այնու կամէր հաճել զմիտս թագաւորին» /Բուգ., 142/: «Հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւն Արտաշրի որդւոյ Սասանայ» /Ազաթ., 15/: Արդի հայերենում չեզոք սեռի բայ է և ունի գրաբարյան չեզոք սեռի նշանակությունները Նույն նշանակություններն ու սեռն ունի միջին հայերենում՝ հաճեմալ - չ. - հաճել, հավանել, բարեհաճել. «որ պարզ երեսով երթանք առ աստուած հանց որ հաճեայ»:

Ինչպես նշեցինք, որոշ բայեր կրկնասեռությունը կորցրել են այս կամ այն բայիմաստը կորցնելու հետ. օրինակ՝ վախճանես¹¹ նք.՝ «ավարտել», «մեռցնել», «վերջացնել», վախճանիմ չք.՝ «մեռնել». «Ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեան և առնու զբազմութիւն զօրաց իւրոց» /Խոր., 147/: «...ի ծննդն և եթ մոլորութեամբ լեալ մինչ նովիմք և վախճանեցաւ» /Խոր., 118/: Արդի հայերենում չեզոք սեռի բայ է և պահպանել է գրաբարյան նշանակությունը (չք.՝ մեռնել):

«Հաջողել» բայը գրաբարում նշանակել է՝ յաջողեմ- նք. 1. ընդառաջել, հաջողեցնել 2. ներգործել, ազդել յաջողիմ-չք հաջողություն զանել, առաջ գնալ: ¹² Արդի հայերենում չեզոք սեռի բայ է և, ինչպես արդեն նշել ենք, ներգործական իմաստի համար ունի այլ բառաձև՝ հաջողեցնել:

«Կանգնել» բայը նշանակել է՝ կանգնեմ - նք. 1. կանգնեցնել, շտկել չք. 2. կանգնել, կանգ առնել. «...և կանգնէր զսեղանս կործանակալս» /Բուգ., 420/: «Եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրոց» /Ն.տ. /: Այս բայն էլ այսօր չեզոք սեռի բայ է, իսկ ներգործականի համար ունի նոր ձև՝ «կանգնեցնել»:

Սեռային փոխանցումների II ուղղության (կրկնասեռությունից - ներգործական սեռ) դեպքում բայերը իրենց այս կամ այն նշանակությունը չեզոք սեռով կորցնելուց (օրինակ՝ «կործել» բայի 1 ձգտել մի բանի, 2 ջանալ, հետամտել, 3 նեղ տեղից բռնությամբ

⁹ ՆԲՀ, էջ 716:

¹⁰ Նույն տեղում, էջ 461:

¹¹ Նույն տեղում, էջ 745:

¹² Նույն տեղում, էջ 585:

անցնել), չեզոք սեռի արտահայտած նշանակության համար նոր բառածև ստանալուց («նեղել», բայի՝ չբ-1 նեղություն կրել, 2 նեղվել, 3 փոքրանալ, արդի հայերենյան «նեղվել» ձևը) բացի ունեն մի առանձնահատկություն ևս՝ միասեռ բայ լինելով հանդերձ՝ միավորել են գրաբարում օգտագործելի երկու սեռերի իմաստներն էլ:

Օրինակ՝ «պնդել» բայը գրաբարում նշանակել է՝ նբ.- ամբացնել, քաջալերել, հաստատել, չբ.- համառել, օգնել, վազել. «...զամենայն ի նոյն պնդեալ ծուլեաց գարաբաժս» /Բուգ., 130/: «Միով գտեալ պնդեցին զմէջս» /ն.տ./: Արդի հայերենում «պնդել» նբ. է, բայց նշանակում է նաև թե՛ հաստատել, թե՛ քաջալերել, թե՛ համառել:

Պետք է նշել, որ կրկնասեռությունը գրաբարում միշտ չէ, որ կապված է եղել ե-ի գուգահեռ լծորդությունների գոյության, իսկ սեռային տեղաշարժերն էլ՝ այդ լծորդությունների միավորման հետ: Այս երևույթն ավելի լայն ընդգրկում ունի և, կարծում ենք, կապված է մի ակնառու իրողության հետ: Լեզվի պատմական զարգացման նախորդ շրջանների համեմատ արդի հայերենը բառերի խոսքիմասային իմաստների և քերականական հատկանիշների տարբերման հարցում ձգտում է միօրինակության և հրստակության: Քերականական իմաստափոխությունների բնույթն ենց այդ է վկայում: Այսօր հայերենի բառապաշարում քիչ են թե՛ խոսքիմասային բազմիմաստություն ունեցող բառերը, թե՛ կրկնասեռ բայերը, իսկ սա գուգադիպություն չի կարող լինել: Միայն է լծորդության են պատկանել և օգտագործվել են գուգահեռաբար ներգործական և չեզոք սեռերի իմաստներով «ժամանել», «կաքալել», «ճամարտակել», «վճարել» բայերը: Կրկնասեռությունը որպես քերականական իրողություն դրսևորվել է նաև // լծորդության պատկանող շատ բայերի մոտ (կարդալ, հոգալ և այլն):

«Վճարել» բայը գրաբարում նշանակել է. չբ. նբ. 1. ավարտել, 2. վերջ տալ, վրձնել, սահմանել 3. գլուխ բերել, իրագործել, կատարել 4. նբ. բավարարել, հոգալ 5. վախճանվել 6. հատուցել, հատուցում ընդունել, 7. ազատել 8. հեռանալ, բաժանվել:¹³ Արդի հայերենում բայը կորցրել է իր բազմիմաստությունը, միայն ներգործական սեռի բայ է և ունի հետևյալ իմաստները՝ դրամով հատուցել մի բան, վարձատրել, փոխհատուցել:

«Հաստատել» երկսեռ բայը գրաբարում նշանակել է. 1. նբ. 1. հաստատ ղնել, տեղավորել 2. կանգնեցնել 3. ամբացնել, պնդել 4. որոշել, կարգավորել, սահմանել 5. կազդուրել, ուժեղացնել 6. ստեղծել 7. հանել, սևեռել (հայացքը) 1. հաստատիմ-չբ. 1. հենվել, կռթնել 2. կատարվել.¹⁴ «Ինքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց» /Բուգ., 130/: «Որ մինչ յայն օր ի հաւատս ոչ հաստատեցի» /ն.տ./: Այսօր բայը ներգործական սեռի բայ է և նշանակում է «սահմանել», «կարգել», «ամբացնել»:

«Վառել» բայն օգտագործվել է որպես՝ նբ.- վառել, այրել չբ.- զինավառվել, սպառագինվել, զարդարվել, զրոգել.¹⁵ «...զի առ յոյժ ցանկականի մոլեզունքեան ի բանսն որ զնմանէ որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր» /Նոթ., 148/: «Ծանեալ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բեյ առաջի ամբոխին եկեալ հասել ընտիրք և վառելոյք ոմամբք» /Նոթ., 48/: Այսօր գործածվում է միայն առաջին նշանակությամբ (ունի նաև վառվել ձևը):

Բազմաթիվ այլ բայեր էլ քերականական իմաստափոխության ենթարկվելիս անցել են նույն ուղին (կրկնասեռությունից ներգործական սեռ)՝ «խառնակել», «խճուղել», «կրթել», «նեղել», «վանել», «փաթաթել» և այլն:

Ինչպես նշեցինք, շատ քիչ բայեր են արդի հայերենում պահպանել գրաբարից եկող կրկնասեռությունը: (31 կրկնասեռներից 5-ը), այն էլ՝ գրաբարում ունեցած իմաստների մասնակի փոփոխությամբ: Օրինակ՝ «հաճախել» բայը գրաբարում նշանակել է՝ նբ.- բազմացնել, ավելացնել, աճեցնել չբ.- բազմանալ, աճել, ավելանալ.¹⁶ «...և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց» /Բուգ., 122/: «...համբալ գեղոյ նորա հաճախեալ բազմանայր և հնչէր» /ն.տ./: Այսօր էլ է կրկնասեռ բայ, բայց, ունի հետևյալ իմաստները՝ նբ.- հաճախակի դարձնել, շատացնել չբ.- հաճախակի գնալ, շարունակաբար այցելել:

¹³ ՆՀԲ, էջ 765:

¹⁴ Նույն տեղում, էջ 479

¹⁵ Նույն տեղում, էջ 749:

¹⁶ Նույն տեղում, էջ 182:

Արդի հայերենում կրկնասեռությունը պահպանած «կարդայ» բայը չունի գրա-
բարյան «ճայնել», «աղաչել», «օգնություն կանչել», «մեծարել», «անվանել», «անուն
դնել» իմաստները: Նշանակում է «ընթերցել», «արտասանել», «վերծանել», «դասախո-
սել», «զեկուցել»: Ունի փոխաբերական իմաստներ՝ «արտաքին նշաններից իմանալ»,
«երգել», «կանչել», իսկ ժողովրդական խոսքում՝ նաև «ուսանել», «սովորել»: Այս վեր-
ջին նշանակությունը, ի դեպ, գալիս է միջին հայերենից. «Կարդայ» նբ, սովորել, ուսա-
նել «Զամէնն ի կարդայ կուտան՝ թէ աղջիկ է և թէ տղայ»: «Կարդել» նբ. կարդայ,
ընթերցել: «Ով կարդէք, յաղօթս յիշեցէք»: ¹⁷

Սեռային փոխանցումների մեջ նկատվում է մի հետաքրքիր իրողություն ևս. շատ
փոքր թվով բայեր, որոնք գրաբարում միասեռ են, արդի հայերենում դարձել են կրկնա-
սեռ սեռ: Մինչ այժմ քննարկված բայերում կատարված իմաստափոխությունը նշվածից
վր խիստ տարբերվում է նրանով, որ այս բայերը այսօր արտահայտում են միանգամայն
այս իմաստ: Ի տարբերություն գրաբարում ունեցած նշանակության՝ այսօր ցույց են
դրում տալիս բողոքովին այլ բնույթ ունեցող գործողություն, որը կարող է պահանջել թե՛ ուղիղ,
թե՛ անուղիղ կի խնդիր լրացումներ: «Խաղայ» բայը գրաբարում չեզոք սեռի բայ է և
նշանակել է՝ 1. շարժվել, խաղալ 2. վխտալ, 3. գնալ, ճանապարհվել, 4. ծիծաղել, 5. կա-
տալ անել ¹⁸. «յաջում թևին նա խաղայր յառաջ» /Բուգ., 238/: «... և աղուեսք մուտ ու ելս
խաղացեն յարկս նոցին» /ն.տ. 176/: «Խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ» /ն.տ. 128/:

Միջին հայերենում էլ է չեզոք սեռի բայ, բայց արդեն «շարժվել» նշանակության փո-
խարեն ունի «մուխխաղով զբաղվել» նշանակությունը, ¹⁹ իսկ արդի հայերենում՝ չբ. 1.
դարձել կարգի խաղով զբաղվել, ժամանակ անցկացնել նբ. 2. որևէ խաղ վարել՝ կատարել,
սպորտային խաղով մրցել իրար հետ. 3. Հերթական քայր կատարել խաղի ընթացքում
4. որևէ խաղի տիրապետել: Եվ այսպես 22 նշանակություն, որոնց մեջ 22-րդը գրաբար-
յան «շարժվելն» է՝ (հին, բնատ) նշումով: «Ապրել» բայը չեզոք սեռի բայ է՝ «փրկվել»,
«ազատվել» նշանակությամբ. ²⁰ «... միայն քարտերովն ապրեսցի» /Բուգ., 140/: «... ապ-
րեսցոյց գնա ի մահուանէ» /ն.տ. 316/: Միջին հայերենի բառարանում տեղ գտած «ապ-
րեցնել» պատճառական բայը՝ 1. կյանք տալ, 2 պահել իմաստներով, ²¹ վկայում է, որ
արդեն այս շրջանում բայը ձևոր է բերել գրաբարում չունեցած և արդի հայերենում հիմ-
նական համարվող նշանակությունը՝ չբ. 1. «կյանք ունենալ», «կենդանի լինել» (+ 14
նոր իմաստներ), նբ. «խորապազ գզալ», «համբերել», «տանել», «համակվել» և այլն:

Բաների նշանակության փոփոխության և մասնավորապես քերականական իմաս-
տափոխության դեպքերն ուսումնասիրելիս շատ կարևոր է նրևույթը իր պատմական
զարգացման մեջ տեսնելը՝ հաշվի առնելով լեզվի զարգացման հիմնական փուլերը,
նմինչդեռ հարցն ուսումնասիրող լեզվաբանները բավարարվել են բառերի՝ հին լեզվում
ունեցած նշանակությունները նոր լեզվում ունեցած իմաստների հետ համեմատելով:
ՍՍտացվում է այնպես, որ իմաստափոխության գործում կարևոր օղակ չի համարվել
նմիջին հայերենը: Կարծում ենք՝ բառիմաստի փոփոխության լիարժեք պատկերն ունե-
նալու համար պետք է հավասարապես կարևորել թե՛ գրաբարը, թե՛ միջին հայերենը,
թե՛ արդի հայերենը: Մ. Աբեղյանը այս հարցին անդրադառնալով՝ գրում է. «Պիտի հա-
վաքվեն բոլոր բառերը թե՛ գրավոր աղբյուրներից, թե՛ բարբառներից, ճշգրտվեն նրանց
նշանակությունները ու կիրառությունները, ապա նոր առանձնապես ուսումնասիրվեն,
թե՛ մեր լեզվի զանազան առումներից ո՞րը հիմնական, ընդհանուր նշանակություն է,
ո՞րը պատահական, բայց սովորական դարձած, թե՛ ո՞ր բառը կամ բառերի ո՞ր նշանա-
կությունը գրաբարից է, միջին հայերենից կամ բարբառներից: Այսպիսի հետազոտու-
թյան ժամանակ չպետք է մոռացվեն նաև օտար լեզուների ազդեցությունները: ²² Լեզվի
ներք շրջանների բառապաշարը ներկայացնող բացատրական բառարանների համե-
մատությունը ցույց է տալիս, որ բառիմաստի փոփոխության մեջ մեծ դեր է խաղացել
նմիջին հայերենը, և իմաստափոխությունը ներկայացնող շատ օրինակներ, որոնք Մ. Ա.

¹⁷ Ռ. Ղ ա գ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 387:

¹⁸ ՆՀԲ, էջ 566:

¹⁹ Ռ. Ղ ա գ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 321:

²⁰ ՆՀԲ, էջ 107:

²¹ Ռ. Ղ ա գ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 321:

²² Մ. Ա բ ե դ յ ա ն ը, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974, էջ 133:

բեղյանի, Էդ. Աղայանի, Ա. Ս. քիսայանի և այլոց կողմից վերագրվել են արդի հայերենին, ըստ Լուսթյան գալիս են հենց միջին հայերենից. Սրասնից հետևում է, որ արդի հայերենը ընդունել է արդեն իմաստափոխված տարբերակը: Այս լեզվական իրողությունն ուսումնասիրող լեզվաբանները երևալքը պատմական մոտեցումով բացատրելով նպատակ չեն համարել: Երևալքը բնույթ է հայերենի որոշակի գույավիճակի ներսում և ոչ թե նրան ընդհանուր պատմության համայնապատկերի վրա»: Օր. Մ. Աբեղյանը գրում է. «պատահում է այնպես, որ բառերի սկզբնական նշանակությունը հետ է մղվում, և նոր նշանակությունը դառնում է սովորական»:²³ Օրինակների թվում նշում է՝ «Ապրել» հին՝ ազատվել, պրծնել փորձանքից, նոր՝ կեալ, կյանք ունենալ, ապս՝ բնակվել: «Ապրանք» հին՝ ազատում, նոր՝ վաճառքի իրեր: «Ապրել» բայի մասին արդեն խոսել ենք: Ուշադրություն դարձնենք «ապրանք» բառի՝ միջին հայերենում ունեցած նշանակությանը, այն է՝ «աշխատանքի արդյունք», որ բաշխվում է զման և վաճառքի միջոցով «գույք», «սեփականություն», «ունեցվածք»: Օր. կու հրամայէ օրեցրեմ, որ զբահանայի տուն և *ապրանք* չգնէ այլ ոք»²⁴:

Եթե Մ. Աբեղյանը ուղղակի ներկայացրել է երևալքը, ապա Էդ. Աղայանը գիտակցաբար իր դրույթները կառուցել է բառերի գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցության որոշմամբ՝ միջին հայերենին ոչ մի ուշադրություն չդարձնելով: Նա նշում է, որ իր կողմնորոշումը «հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի ոչ գրաբարյան նշանակությունները, իսկ դրանք էլ տարբերակելու ըստ վերը թվարկված ոլորտների (գրական աշխարհաբար, խոսակցական (ժողովրդախոսակցական) (աշխարհաբար, բարբառներ և այլն), որոնց օգնությամբ միայն կարելի է ճիշտ որոշել զգրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և նրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին»:²⁵ Եթե ուշադրություն դարձնենք Էդ. Աղայանի կողմից իր տեսակետը հիմնավորելու համար բերված օրինակներին, կնկատենք բազմաթիվ վրիպակներ, որոնց գոյությունը կապվում է հենց այն փաստի հետ, որ հեղինակն անտեսել է լեզվի պատմական զարգացման այն շրջանը, որտեղ կատարվել է իմաստափոխությունը և դրանք ներկայացնող դեպքերը վերագրել է հաջորդ շրջանին, այսինքն՝ համարել է արդի հայերենյան իմաստափոխություն: Օր. ապաստուգաբանության հիմունքով կատարված իմաստափոխության մասին խոսելիս Էդ. Աղայանը օրինակ է բերում «կծու» բառը, որը «նախապես եղել է «ցավ պատճառող» հետագայում ստացել է «բարկ», «փոթորող» (համի վերաբերյալ) նշանակությունը՝ «կծել» իմաստի մթազմման հետևանքով»:²⁶ Այս իմաստափոխությունը արդի հայերենյան չէ: Միջին հայերենի բառարանում կարդում ենք. «*Կծու* ահամ կերակուրք շալակեն ի հետ իւրեանց»:²⁷ Նույն պետք է ասել «դեղձ» բառի մասին, որի ոչ թե արդի, այլ միջին հայերենյան նշանակությունն էր հեռացել գրաբարյան «դեղին, դեղնագույն», նշանակություններից և ձեռք է բերել «դեղձենու պտուղ» կամ «դեղձենի» իմաստը: «Կամ զդեղձին տերևն ծեծէ՝ և զգուր կաթեցո»:²⁸ «Յատենիլ երբեմն յանդիմանել սկսաւ *դեղձի* սերկկիլի»:²⁹

Հենց միջին հայերենում է «մարդ» բառը կորցրել իր իմաստի և ստուգաբանական իմաստի կապը՝ ստանալով այնպիսի իմաստ, որը չէր կարող բացատրվել նախկին իմաստով՝ «կնոջ ամուսին»: «Տեսեր, որ իր մարդն չէր, մալուլեր ու հետ է դարձեր»:³⁰ Փաստորեն, բառը արդեն ապաստուգաբանված փոխանցվել է արդի հայերենին: Զգայական - վերաբերմունքային հիմունքով կատարված իմաստափոխությունը իրոքց հատուկ է արդի հայերենին՝ ի տարբերություն բյուրեղմբանական հետևանքով կատարված իմաստափոխության շատ դեպքերի: Կամ բառեր, որոնք սխալ կերպով մեկնաբանվել են նախքան արդի հայերենի բառապաշար մուտք գործելը:

²³ Մ. Աբեղյանը, նշվ. աշխ., էջ 133:
²⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 75:
²⁵ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 78:
²⁶ Նույն տեղում, էջ 85:
²⁷ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 400:
²⁸ Նույն տեղում, էջ 172:
²⁹ Նույնը:
³⁰ Նույն տեղում, էջ 116:

Օր.՝ «մազապործ» բառի սխալ մեկնաբանությունը (մազ-ապուր-դարձրել են մազա-պուրծ) դարձյալ կապված է միջին հայերենի հետ: «Մազապործուկ փախստական եղև»: ³¹ Գնանք ավելի հետ՝ գրաբարի բացատրական բառարանում կարդում ենք՝ մազապուր կամ մազապուրծ ա. մ. - վտանգից հազիվհազ ազատված: ³²

Ի՞նչ խոսք, բառը շատ հեռու է արդիից: Իմաստափոխությունը համարվելուց: Նույնը «ճրագալույց» բառի մասին, որի «գույց», «լուցանել», «վառել» բայի արմատը փոխարինվել է «լույս» բառով: ³³ Գրիգոր Տաթևացու մոտ կարդում ենք «Ճրագալույցն թարգմանի աղօտ ծագումն, որ նշանակէ զմարգարեսն»: ³⁴ (ԳՏԳԲԶ, 31): Պատմական իմաստափոխության դեպքերից իմաստների բևեռացման մասին խոսելիս Էդ. Աղայանը բերում է «աղ», «մեղք» բառերի իմաստափոխությունը՝ որպես օրինակ ասվածի համար: «Աղ» բառից գրաբարում ունենք «աղու», «քալցր», «անուշ» (դրանից է արևմտահայերեն «աղվոր» բառը): ³⁵ Միևնույն ժամանակ «աղ» բառը նշանակում էր «աղի», «թթու», «կծու» (հիմնականում բարբառներում «աղու» բառը արդեն ստացել էր նաև այդ նշանակությունները): Նույն իմաստները պահպանվել են միջին հայերենում, իսկ վերոհիշյալ «աղվոր» բառը անկասկած միջին հայերենից է անցել արևմտահայերենին:

«Աղուոր կանայք տղայօք զնացին զերի յաշխարհն Պարսից» ³⁶ (ՍՄՊ, 50): «Աղուոր» կամ «աղվոր» արմատով կազմված տասից ավելի բառեր կան միջին հայերենի բառարանում: ³⁷ «Մեղք» բառի մասին խոսելիս Աղայանը նշում է, որ «աշխարհաբարում պահպանելով «հանցանք» (որից «մեղավոր», «մեղադրել» բառերը) նշանակությունը, ինչպես և «ամխիղճ արարք, խղճի դեմ արարք, իմաստը, մյուս կողմից՝ ստացել է «զուր», «խիղճ», «խղճմտանք», «խղճալի» նշանակությունները (հմմտ՝ «մեղքը գալ», «մեղք է», «մեղքանալ» և այլն): ³⁸ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, միջին հայերենում մեղուր (մեղավոր, անիրավ), մեզք դնել (մեղադրել) բառային միավորների կողքին արդեն կա «մեղքն գալ» արտահայտությունը՝ «խղճալ» նշանակությամբ. «Աջաբ ես քեզի մեղքդ չեմ ի գար» ³⁹:

Էդ. Աղայանը խոսում է նաև իմաստափոխության տեսակների մասին՝ լստ իմաստի զարգացման արդյունքի, ինչպես ինքն է ասում՝ «իմաստների փոխազդողման» մասին ⁴⁰ և ասվածը ցույց տալու համար բերում է օրինակներ, որոնք նշված իմաստները դարձյալ ձեռք են բերել միջին հայերենում և նոր նշանակությունն ունենալով՝ անցել են նոր լեզվին: «Սեղան» բառը արդեն միջին հայերենում չուներ «զոհարան», «բազին» նշանակությունը «զի սեղան կազմեն և կոչեն զձեզ ի խրախարան»: ⁴¹ «Նախել» բառը իր «վաճառել» նշանակությունը ձեռք է բերել միջին հայերենում և ոչ քե արդի: «Դատաստանն երեքում օր ետուր Անդրեին, զի հանցէ մինչև երկուշաբթի զիւր գրտականն, և եթէ չհանիցէ, նա ծախու հանիցէ կատարել»: ⁴² Նույնը պետք է ասել «խաղալ» բայի «խաղ անել» ⁴³ նշանակության, «խնդրել» բայի «աղաչել» ⁴⁴ իմաստի մասին և այլն: Ա. Սուքիասյանը «ղարման» բառի «հարդ» իմաստը վերագրում է արդի հայերենին (նշում է՝ այժմ ունի «հարդ» իմաստը): ⁴⁵ Այդ, արդի հայերենում «ղարման» նշանակում է հարդ, բայց բառի այս նշանակության հնագույն վկայությունները հանդիպում են գրաբարում. օրինակ. «Իբրև ոչ գտաւ խար երիվալսաց գօրում բազմութեան

³¹ Ռ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 96:

³² Ա. Ա թ թ ա հ ա մ յ ա ն, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 318:

³³ Էդ. Աղայան, նշվ. աշխ. էջ 89:

³⁴ Ռ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 94:

³⁵ Նույնը:

³⁶ Նույն տեղում, էջ 105:

³⁷ Նույն տեղում, էջ 32-34:

³⁸ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 105:

³⁹ Ռ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 108:

⁴⁰ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 108:

⁴¹ Ռ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 321:

⁴² Նույն տեղում, էջ 361:

⁴³ Նույն տեղում, էջ 321:

⁴⁴ Նույն տեղում, էջ 344:

⁴⁵ Ա. Ս ո լ թ ի ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 139:

դարման կերակրոյ մինչև ի մեջգիշեր» /Ազաթ. 32/: «Ի խոտոյ է դարման չորքոտանեաց» /Վեցոր, 83/ «Որ գարօտն արմոջ նախ ինքեանք ուտէին... և զմնացեալն յինքեանց զընդ գետինս հարեալսն զդարմանս... քողոխին հօտին» /Նար. երգ 330/: Դարման բառի «հարդ» նշանակությունը հանդիպում է նաև միջին հայերենում: «Նօսր դարման տուր, և ի խոտէ մի՛ գատեր»: ⁴⁶ «Մուրք» բառը ոչ թե արդի, ⁴⁷ այլ միջին հայերենում է ձեռք բերել «մաքուր, ազնիվ, առաքինի» իմաստները: Այդ են վկայում միջին հայերենի բառապաշարում տեղ գտած «սրբագրել», «սրբամաքուր», «սրբակրոն», «սրբաշեն», «սրբաջինջ», «սրբաքար», «սրբիչ» ⁴⁸ բառերը: Այս և նման բազմաթիվ օրինակներ վկայում են պատմական իմաստափոխության, ինչպես նաև քերականական իմաստափոխության գործում միջին հայերենի ունեցած դերի մասին: Եթե հարցին հայերն ավելի լայն տեսանկյունով, կնկատենք, որ պատմական իմաստափոխությունը՝ որպես լեզվական իրադրություն, հիմնականում կապվել է միջին հայերենի հետ, իսկ արդի հայերենում ավելի քիչ դրսևորում է ունեցել: Դրան հակառակ՝ արդի հայերենում զարկ է տրվել բառի բազմիմաստությանը, փոխաբերական իմաստով գործածվելուն և, իհարկե, քերականական համակարգի հստակեցմանն ու կանոնավորմանը՝ կապված, ինչպես ցույց տվեցինք, քերականական իմաստափոխությունների բնույթի և առանձնահատկությունների հետ:

Համառոտագրություններ

- Ազաթ., - Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914
 զՏԳԷԶ - Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան..., Կ. Պոլիս, 1861
 Եղ., - Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989
 Բուզ., - Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987
 Խոբ., - Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913
 ՀՀԱԶ - Հայ հին և միջնադարյան քերականություն, Երևան, 1987
 Նար. երգ., - Մեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի,
 ՍՍՊ - Սմբատայ սպարապետի Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց, Մոսկուա, 1856
 Վեցոր., - Բարսեղ եպ. Կեսարոյ Կապադովկացոյ ճառք վասն վեցորեայ արարչութեան. Վենետիկ, 1830

СМЫСЛОВЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ В ИСТОРИЧЕСКОМ РАЗВИТИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Г. Закарян

В статье представлены изменения в грамматических значениях в процессе исторического развития армянского языка, в частности, изменения лексических значений и залоговых форм глагола.

Как показывают исследования, в процессе исторического развития армянского языка происходил переход от многозначности к однозначности, а также от двойных залоговых форм и залогового параллелизма — к однозаголовым формам.

Природа изменений грамматических значений свидетельствует о том, что грамматическая система армянского языка в процессе своего исторического значения стремилась к единообразию в вопросе, касающегося лексических значений и установления грамматических свойств, к четкости.

⁴⁶ Ռ. Ղ ա գ ա ղ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 169:

⁴⁷ Ա. Սողոմայան, նշվ. աշխ., էջ 139:

⁴⁸ Ռ. Ղ ա գ ա ղ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 347-348: